

✱ Հարաւային Փրօսանայի Հայ թեմին առաջ-
նորդական լիովանորդը՝ Տ. Զօգն վրդ., իր վեր-
ջին տարւոթեմէն կատարեալպէս ապաքինած,
կը շարունակէ իր պաշտօնը, Մարտէլի մէջ մառ-
նաւորաբար անխափան կատարելով իր հովուա-
կան, քարոզչական և վարչական պատրաստու-
թիւնները: Անցեալ Հոկտեմբերին հոգեւոր պար-
տականութեամբ դարձեալ այցելած է Միլան: Օգ-
տոեանով առիթով՝ անցած է Վենետիկ և վայն-
լած՝ Ս. Հաղարու Մխիթարեանց սիրալիք ընդու-
նելու թիւինը. Նոյեմբերի վերջերք այցելած է Տրա-
կէնիա, Մարտէլիէ Նիս ճանապարհին վրայ, ուր
կան շուրջ 150 դործաւոր հայեր. Դեկտեմբերին
սկիզբը ևս այցելած է Թուրին. Դեկտեմբերի վեր-
ջերք Նորին ցացած է Միլան, պատարագած և
քարոզած է Անկլիքան եկեղեցիին մէջ: Ի Միլան
վերջին այցելութեան մը միջոցին, Դեկտ. 23ին,
յայտորդ քն իսկ շտապած է Թրիեստ, ուր յան-
կարծաժան եղած էր ազգային բարեբար Պ. Մու-
րատեան, և ուղարացեալին յուզարկաւորութիւնը
կատարած:

✱ Ամերիկայի Բրոյխտէնէն, ուր անցեալ
տարւոյ Օգոստոսէն ի վեր Հոգեւոր Հովիւ է Տ.
Սիւն վրդ., Եկեղեցւոյ Հոգաբարձութիւնը նա-
մակ մը ուղղած է Ս. Պատրիարք Հօր, սրտազին
գոհունակութիւն վայելեալով վարդապետին գոր-
ծունէութեան մասին, և դրուատիքը ընելով ա-
նոր հոգեւորականի բարեմասնութեանց: Օրհնու-
թեան և սիրոյ գիրով մը պատասխանուեցաւ Ի-
րենց:

✱ Տ. Հայկազուն վրդ.՝ Յովպէի է Տ. Յուսիկ
վրդ.՝ Հայֆայի տնօնէները, առաջինը շուրջ եր-
կու տարիներէ և երկրորդը վեց ամիսներէ ի վեր
եռանդուն Նուիրումով կը պաշտօնավարեն, Ի-
րենց լըշաններու ժողովուրդին սիրոյն և զեա-
հատութեան միշտ աւարտարկ, Ս. Աթոռոյս կողմէ
իրենց տրուած հրահանգներուն համեմատ: Եր-
կուն ալ, բացի իրենց վարչական և քարոզչա-
կան պարտականութիւններէն, կը զբաղուեն
Նաեւ իրենց տեղեւոր ազգային վարժարաններուն
մէջ:

✱ Միւսները, Տ. Նորայր վրդ.՝ Անթիլիոսի
Դպրեվանդաց Տեսուչը, Տ. Գեղամ վրդ.՝ Գալի-
ֆորիոյ Լուսնեկոսի Հոգեւոր Հովիւը, Տ. Գա-
րուր վրդ.՝ Կիպրոսի փոխ-Առաջնորդը և Մելգոնե-
ան Վրթարանի հոգեւոր պաշտօնեան և ուսու-
ցիչը, կը պաշտօնավարեն լուիկ և գոհացուցիչ
արդիւնատուութեամբ:

✱ Բազմաթիւ տեղերէ կը շարունակուին Հո-
գեւոր Հովիւի եւ պաշտօնեայի խնդրանքներ:
Մասնաւորաբար Հարաւային Ամերիկայի հայրա-
պետական պատուիրակը Տ. Գարեգին Արքեպ-
իսապետեան կը փափաքի որ երկու վարդա-
պետներ զրկուին, մին Պրազիլիոյ և միւսը Ար-
ժանթիին համար, իսկ առաջնորդներուն կարելի
պիտի ըլլայ Աստուծով գոհացում տալ սակայն
ա՛յն ատեն միայն երբ նոր ձեռնարկութիւններով
հնար լինի լեցնել մեկնողներու թողած բաց տե-
ղերը:

ԶԱՅՆ ՄԸ Ս. ԷԶՄԻՍԱԾՆԷՆ

Այս վերնագրին տակ պիտի լիսենք Մայր
Աթոռոյ Ս. Տեղակալէն վերջին անգամ բոլոր թե-
մերը զրկուած շրջաբերական հարցանքին մա-
սին, զոր մեկը եւս ստացանք, եւ որուն ըստ
պատշաճին պատասխանէք Ս. Պատրիարք Հայրը:
Կ'ուզենք ուրիշ տեղեկութիւն որ տալ:

Ն. Ամենապատուութեան եպիսկոպոս քացակա-
յած միջոցին, Երուսաղէմէն բարեպաշտ տիկին
մը համեստ գումար մը յանձնած էր Լուսարարա-
պետ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոսին, որպէսզի իշ-
միածին դրիճ գայն՝ խնդրելով որ յատուկ Հոգե-
հանգստեան պաշտօն կատարուի հոգեկոյս Տ. Թո-
րէն Ս. Հայրապետին համար: Սրբազանը կատա-
րած էր իրեն եղած յանձնարարութիւնը. վերջերս
Տեղակալ Սրբազանէն ստացուեցաւ պատասխան
մը, որ կը յայտնէ թէ ստացած է զրկուածը, և
Մայր Տաճարին մէջ հանդիսաւոր Հոգեհանգիստ
կատարուած, եղած խնդանքին համեմատ: Նոյն
նամակին մէջ Տեղակալը հարցուցած ըլլալով թէ
արդեօք Թորգոմ Պատրիարք չէ՞ ստացած իրեն
ուղղուած 27 Սեպտ. թուակիրը, հեռագրաւ իւ-
կոյն պատասխանուեցաւ թէ այդպիսի նամակ չէ
ստացած Ս. Էլմիածինէն, և խնդրուեցաւ պատ-
ճէնը փութացնել:

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԱՄՍՕՐԵԱՅ ԼՈՒՐԵՐ

✱ 1 Յունուար Կիր. — Յանուն Ս. Աթոռոյս,
վաճ. Բարձր Գովարներին, կառավարական բար-
ձրագոյն պաշտօնակալաց, Հիւպատոսական Մար-
մինին և բոլոր եւրոպական հաստատութեանց որ
առաջ Ս. Պատրիարք Հօր կողմէ դրուած կերպով
ուղղուած էր շնորհաւորութիւն՝ Նոր Տօմարի Տա-
րեմուտին առթիւ:

✱ 4 Յուն. Դշ. — Ամեն. Ս. Պատրիարք Հօր
հանդիսապետութեամբ՝ Ըրալափառ և Նախատո-
նակ կատարուեցաւ Ս. Յակոբայ Մայր Տաճարին
մէջ՝ յաշուր օրուան Դաւթի Մարգարէի և Յա-
կոբոս Տաճանեղբոր տօնին առթիւ:

5 Յուն. Եշ. — Տօն առաքելական Ս. Աթո-
ռոյս: Պատարագեց Տ. Մեսրոպ Արքեպ. և քա-
րոզեց Ամեն. Ս. Պատրիարք Հայրը Աթոռ. և քա-
կառուած, յաւիտեան յաւիտենից, գաւազան
ուղղութեան՝ դաւազան արքայութեան քոչ բը-
նաբանին վրայ, բացառեց թէ քրիստէ իշխանու-
թիւն ա՛յնքան աւելի նշմարիտ է որքան աւելի կը
հիմնուի աստուածային արդարութեան ուղղութե-
ններէ վրայ:

Ըստ սովորութեան՝ Վփառք ի բարձունքէն
առաջ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը՝ եպիսկոպո-
սական զգեստաւորմամբ՝ անցաւ Ս. Յակոբոս

Տեսանեցի՞ր որ առաքելական Աթոռին առկն է կե-
ցաւ մինչեւ Ալբարէականն երգին աւարտումը։
«Քրիստոս Առաւել մեր» մաղթանքն ընթացքին,
որուան սուրբերու հանդիսաւոր յիշատակումին
առթիւ, լուսարարպետ Տ. Մեսրոպ Սրբազան
յատուկ մաղթանքներ ըրաւ Ս. Աթոռոյ Ամեն.
Գահակալին կենաց երկարութեան հ. Ս. Աթոռոյ
պայծառութեան համար, որմէ վերջ, այսինքն Ս.
Պատրիարքէն առաջ, ամբողջ եկեղեցական զօրը,
եպիսկոպոսունք, վարդապետք, սարկաւազունք
և զպիւրջ մօտեցան ի համարյոյ Ս. Հօր Այնին։

✽ 7 Յուն. Շբ. — Ս. Սահփաւոսի տօնը այս
տարի ևս արժանապէս պանծացուցին Ս. Աթո-
ռոյ սարկաւազները — Թիւով 12 հոգի — իրենց
հոգեւանդն երեցեցութեամբ և վայելուչ դիպա-
վարութեամբ։ «Քրիստոս Առաւել մեր» մաղ-
թանքէն յետոյ խօսեցաւ Ամեն. Ս. Պատրիարք
Հայրը, սարկաւազաց կրած եկեղեցական զգես-
տաւորման մէջ ցուցնելով անոնց ապագայ կենա-
քին խորհրդանշանները, և մաղթելով որ նշանա-
կուած այդ խորհրդները լրիւ իրականանան ա-
նոնց ապագայ կեանքին և զօրութեւնութեան ըն-
թացքին։

— Պատրիարքարանի կողմէ այցելութիւն
տրուեցաւ այսօր Ղպտուց, Ասորուց, Հապէշաց
վանքերը, Ենեդեան տօնին առթիւ։ Իրենց ռեպ-
կական պատահաններով, Յոյները այս տարի ոչ
մէկ տեղ չտուին և ընդունեցին որ եւէ այցե-
լութիւն։

— Յետ միջօրէին՝ վարդապետաց ընթերցա-
սարանի մէջ պողպտեան պէ արտաբանութեամբ էր
վարդապետներու կողմէ՝ իրենց կրօնքը եղբայր-
ներուն — սարկաւազներուն — ի պատիւ։ Զուարթ
միջոցութիւն մը մէջ եղան երկուստեք սիրալիւր
արտայայտութիւններ։

— Երեկոյին ժառ. Վարժարանի հաշարահին
մէջ ևս տեղան մը տրուած էր Սարկաւազաց տօնին
սեղանքը. ներկայ էր և կը նախագահէր ռոյն
սեղանին Ամեն. Ս. Պատրիարք Հայրը. հրաւիր-
ուած էին նաև ուսուցիչ վարդապետներ։ Խօսե-
ցաւ ինք, Ս. Պատրիարք Հայրը, ծանրանալով
որուան մեծ նահատակի հոգեւորապէս դիւցազ-
նական վարժանքին մասին։

✽ 8 Յուն. Կիր. — Ի Ս. Հրեշտակապետ պա-
տարագի ընթացքին քարոզքը Տ. Միւռնէ վրդ.,
որ ներշնչուելով օրուան ձաշու Աւետարանի Աւա-
տուած, քաւեա՜ր զիս զմեղաւորած քնարանէն,
բացատրեց թէ մեղքը ուրիշ բան չէ մարդուն
համար՝ եթէ ոչ չնորձաց նուազութիւն մէջ։ Գի-
տակից հոգին կը վերստանայ իր կորսնցուցած
շնորհները՝ զվշտմով։ Իսկ Քրիստոսի նմանելու
յատուկ շանդարութեամբ ևս առաւել կը ճոխա-
ցունէ զանոնք։

✽ 9 Յուն. Բշ. — Աւագ տօնըրու ամենէն սըր-
նազաններէն մին, համայն Քրիստոնէութեան
մեծ առաքնախներու, Ս. Պետրոսի և Ս. Պօղոսի,
յիշատակութեամբ՝ կատարուեցաւ պատշաճ հան-
դիսաւորութեամբ, Ս. Յակոբայ Մայր Տաճարին
մէջ, յատուկ Ս. Պատարագի մատուցմամբ ձեռ-
նայարկ զօրջ տեղաններէն միոյն վրայ։

✽ 10 Յուն. Գշ. — Ողորդ Որոմամ տօնին
առթիւ մեծ հանդէսով պատարագեց Ս. Պատրի-
արք Հայրը Ս. Գլխաղբի մատուռին մէջ։ Ս. Հօր
քարոզը, որուան տօնին առթիւ, դրուած է Սիմնի
այս Թիւին մէջ։ — Ս. Պատարագէն ետք, երկվոր
զարմամբ Թափօր կատարուեցաւ զիսաւորու-
թեամբ Ս. Պատրիարք Հօր, որ Կենաց Փայտի
մատուռը պարունակող ոսկեփայլ հաւանքը ի ձե-
ռին կ'օրհնէր ներկայ բազմաթիւներէն։

✽ 12 Յուն. Եշ. — Հապէշաց վանքի հին եւ
նոր մեծաւորները այսօր այցելեցին Պատրիար-
քարան. ի Յորդանան բացակայ լինելով, ուշ-
մացած էին վերադառնալ եգիպտոսէ։

✽ 13 Յուն. Ուր. — Ըստ եկեղեցական տա-
մարի հին տարուայ վերջալստին՝ ամբողջ Միաբա-
նութիւնը՝ զիսաւորութեամբ Տ. Մեսրոպ Սրբա-
զանի՝ պատրիարքարանի դահլիճը բարձրացաւ,
ընդունելու Ս. Պատրիարք Հօր ձեռքէն աւանդա-
կան կաղանդէքը — Նոր Տաղույ օրացոյցները։
Ս. Պատրիարք Հայրը քանի մը խիտ խորհրդա-
ծութիւններով բարեւաւ երթ մաղթեց անցնող
տարւոյն, որ իսկական մշտական շի տարի մը ե-
ղաւ ամբողջ մարդկութեան համար և սուգի քօ-
ղով ծածկեց Ս. Էջմիածնի Հայրապետական Ա-
թոռը. մաղթեց որ յառաիկայ տարին ըլլայ ամ-
բողջ աշխարհի համար խաղաղութեան տարի մը
և մեր ազգին համար բարօրութեան և Ս. Աթո-
ռոյ համար պայծառութեան լրջան մը։

Նոյն իրիկունը ժառ. Վարժարանի սրահին
մէջ քաղաւած էր առաւին Կաղանդի երեկոյթ
մը, որուն հրաւիրուած էր նաև ուսուցչական
զօրք։ Աշակերտներէն մին հարգազ ուղերձ մը՝
ուղղեալ տեսչութեան և ուսուցչութեան, որուն
պատասխանէ վարժարանի տեսուչ Ս. Եղիշէ
վրդ.։ Կաղանդէքներու բաշխումէն ետք՝ ժա-
ռանգաւոր սաները ներկայացուցին յոյժ ծիծաղա-
շարժ կրկնակ տրամներ։

✽ 14 Յուն. Շբ. — Նոր Յարի բոտ Հին Տօ-
մարի Առաւօտուն Ս. Պատարագ մատուցուեցաւ
ի Ս. Յակոբ. պատարագեց ժամասաց Տ. Գէորգ
վրդ. և քարոզեց Ամեն. Ս. Պատրիարք Հայրը,
վնասով մաղթեց քոյ տեսանեմք զոյոյս բնարա-
նով, և մաղթելով որ աստուածային իմաստու-
թեան և սիրոյ լոյսով պայծառանան բոլոր սիր-
սերը, որպէսզի նոր տարին նշմարիտ խաղաղու-
թեան և սիրոյ երշնակութիւնը բերէ աշխարհ։

— Ս. Պատարագէն ետք պատրիարքարանի
Դահլիճին մէջ տեղի ունեցաւ Ամանորի հանդէս
մը։ Լուսարարպետ Տ. Մեղրոպ Ուրեգպոս., ի դի-
մաց իմարանութեան, Կարգաւ ուղերձ մը Ամեն.
Ս. Պատրիարք Հօր ուղղուած, ուր Սրբազանը
զոհունակութեամբ անկարկուծիւններ կ'ընէր
անցնող տարւոյն մէջ կատարուած գործերուն մա-
սին, և հակառակ տրեղջ շփոթ կացութեան՝ յոյ-
սով և վստահութեամբ կը նայէր գալիք տարուան
վրայ։ Այսպ Յովսէփ Սրբ., ի դիմաց ժառ. Վար-
ժարանի և Բնծայարանի ուսանողութեան, կու-
գար իր որդիական երախտագիտական սիրալիւր
զգացումները յայտնել Ս. Պատրիարք Հօր, ի վեր-
ջոյ Սրբոց Թաղմանից վարժարանի Մանկա-

պարտեզի փոքրիկներէն կարմրազգեստ տղեկ մը, վարդերու փուռնով մը և զոլտրիկ արտասանութեամբ Թարգմանչաց Վարժարանի աշակերտութեան մանկական սորոյ զգացումներէն փուռնովը կը մատուցանէր Նորին Ամենապատուութեան: Մէջը ընդ մէջ կ'երգէին ժառ. սաներ՝ կարապետ Սկէ. Սիւրենեանի զեկավարութեամբ: Հուսկ ապա խօսք առաւ ինք. Ս. Գառրիարքէ չէր, և չորհակալութեան, օրհնութեան և բարեմաղթանքի արտայայտութեանց մէջ փակելով, որմէ վերջ բոլոր ներկայից և բազմաթիւ ժողովրդեան բաշխեց մի մի նարինջ յազակեցեան, ընդամենը 800:

— Ի Ս. Հրեշտակապետ Նոր Տարւոյ առթիւ զարգեց տեսուչ Տ. Վահան լրգ. Չըգոյշ լերուք թուէ ոք յետեւալ գտնուիցի Ս. Եննիգեան Աստուծոյ բնաբանով. բացատրեց այս խօսքին իմաստը և յորդորեց ժողովուրդը Աստուծոյ շնորհքը չփոխանակել երկրաւոր իրերու ետ:

— Բարձր Գոմիսէրին եւ Ձիֆ-Սըքթէթէրի կողմէ մասնաւոր պաշտակալները եկան Գատարիարքէին ի շնորհաւորութիւն ամանորի. Նոյնպէս Հիւպատոսներէն շատեր, ուրիշներ նամակաւ կամ անցաքարտով կատարեցին այդ պարտականութիւնը:

— Տ. Մեսրոպ Սրբազան, Ս. Գառրիարքէ չոր կողմէ իտալական Հիւպատոսարան գնաց կէտրէ վերջ, ներկայ գտնուելու համար Ք. Ձէմալբէկէի ի Հռովմայցեանութեան առթիւ սարքուած ընդունելութեան:

— Նոյն օրը, յետ միջօրէի, Ամեն. Ս. Գառրիարքէ չորքէ՝ Տնօրէն ժողովոյ անդամներով միատեղ՝ շնորհաւորական տարեկան այցելութիւնը տուաւ ժառ. Վարժարանին, ուր աշակերտութիւնը շարունակ վարժարանի դրան առջև՝ ընդունեց Նորին Ամենապատուութիւնը և առաջնորդեց վարժարանի քայլերգով՝ ձենարան, որ Նոր Տարւոյ առթիւ պաշտակալները զարգարուած էր: Աւետում Սրկ. կարգաց ուղեք մը՝ որուն պատասխանեց Սրբազան չորքը կայրական զգացմամբ: Աշակերտութիւնը ընդունեց Սրբազան չորք Նոր Տարւոյ շնորհաւորութիւնները աշխարհայրով, մէյմէկ խնամքի հետ:

✽ 15 Յուն. կիր. — Ս. Գատարաքը մատուցեցեցաւ ի Ս. Հրեշտակապետ, ուր շարքեց Տ. Շուարշ լրգ.՝ հետեւեալ բնաբանով. Վատեանց զնա ի խանձարուրու ե կը ի մտաւր, զի ոչ քորնեցաւ տեղի ի յիկանիմա: Ս. Եննիգեան յառաջիկայ տօնին առթիւ յիշեցուց հաւատացեալներու պարտականութիւնները և յորգրեց որ պատրաստ ըլլան փրկիչը ընդունելու համար:

— Ս. Գառրիարքէ վասն շնորհակալութեան այցելեց Ծրանտական Հիւանդանոցը, բժշկին և Գոյնբուս:

✽ 18 Յուն. Դշ. — Ս. Եննիգեան ձրագալայցի առաւօտուն, ժամը 9ին, ետքը ինքնաշարժներու պաշտօնական երթով Ամեն. Ս. Գառրիարքէ չորքէ՝ մարտչ Միաբանութիւնը Բեթլեհէմ գացին՝ Ս. Եննիգեան տանը իր պատմական վայրին վրայ կատարելու համար: Բեթլեհէմի մէջ Ս. Եննիգեան վանքի բակին մէջ Թափօր կազմուեցաւ և շնոր-

հուր ժեծիքի երգեցողութեամբ բարձրացանք մեր վանքը, ուր Ս. Գառրիարքէ չորքը առաջին անգամ աւետեց Փրկչի ծննդեան աւետիւը:

Թափօրին կը մասնակցէին նաև Բեթլեհէմի կառավարիչը, ոստիկանապետը և այլ պատշաճական անձինք, որոնք Թափօրէն ետքը պատուաւորուեցան վանքի Տնօրանին մէջ:

Յետ միջօրէի, ժամը 1ին՝ Ս. Գառրիարքէ չոր հանդիսակատարութեամբ՝ «Հրաշափառ» ով մուտք գործուեցաւ Ս. Այլը, ուր հանդիսակատար Սրբազանը և վարդապետը կատարեցին իրենց ուխտը, ապա Ս. Եննիգեան եկեղեցիի մեր բաժնին մէջ պաշտուեցաւ ձրագալայցի արարողութիւնը եւ Ս. Գատարաքէ՝ նուիրական Այլին վրայ՝ ներկայ էր ժողովուրդի զգալի բազմութիւն շայց ոչ խուռն՝ օտովրդական տարիներու պէս. տիրող կացութիւնը արգելք եղած էր շատերու փախալէն: Զրպալարայցի պատարագէն ետք Ամեն. Ս. Գառրիարքէ չորքը վերագարձաւ. Երուսաղէմ. իսկ զինչային ժամեղութեանց և յարակից արարողութեանց նախադանք Տ. Մեսրոպ Արքեպս.՝ որ և շարքեց Չըգոյշներէնքէն առաջ և մեծ հանդէսով մատուց առաւօտեան երրորդ պատարագը Ս. Այլին վրայ: — Գիշերուան ժամը 10ին սկսած այս անընդհատ հեղուր վերջացաւ առաւօտեան ժամը 6ին:

Ժամը 8ին՝ նախօրը օրուան պէս՝ Նոյն ինքնաշարժներու պաշտօնական գնացքով Միաբանութիւնը վերագարձաւ մայրաքաղաք, ուր միանալով առաւ մնացած եղբայրներու հետ՝ բարձրացաւ Գառրիարքէարան, ուր Տ. Մեսրոպ Արքեպս. հաղորդեց Ս. Գառրիարքէ չորքէ՝ Եննիգեան նուիրական Այլին բերուած աւետիւը, զոր խորհրդեքեմար ընդունեց Սրբազան չորքը, որինք ամէնքը եւ աշխարհի խաղաղութեան համար մաղթանք բրաւ: — Ս. Եննիգեան տօնին առթիւ Երուսաղէմի մէջ եւ, Մայր Տաճարին մէջ, կատարուած էր ձրագալայցի արարողութիւն Ս. Հրեշտակապետաց վանքի Տեսուչ Տ. Վահան լրգ. ի հանդիսակատարութեամբ, որ և յաջորդ օրը հանդիսի. պատարագած է. շարքած՝ Ս. Գառրիարքէ չորքը: Ժամեղութեանց և Ս. Գատարաքի երգեցողութեանց բաժնիը վարձած էին շրագալայի զվիդները:

✽ 20 Յուն. Ուր. — Ս. Եննիգեան Մեհեղոյի առթիւ Ս. Գատարաք մատուցեցաւ Մայր Տաճարին մէջ, զոր մատուց Ս. Աթոռոյս Ասպիթարման Տ. Հայրիկ լրգ.: Օրուան շարքդին էր Տ. Բեթլեհէմ լրգ., որ ապաւորիչ ջաղցրութեամբ բացատրեց Յիսուսի փորձութիւններուն խորհուրդը, անոր մէջ ցուցնելով մարդկային կեանքի մէջ չարութեան օգիւն սաղուած հրապոյսներուն աստուածօրէն զիմաղքելու առաքելութիւնը:

— Այսօր Գառրիարքէարան շնորհաւորական այցելութիւն տուին Անիւրեան Եպիսկոպոսի ներկայացուցիչը, Լատինաց Գառրիարքէ՝ Իր փոխանորդ եպիսկոպոսով և վարդապետներով, Ծրան-խիֆեանց Կիւստոտայի Գրգիւրօրք՝ առաջակայց ժողովուրդներով, Լզարուց, Առուրուց, Հաւպէտաց, Հայ և Յուն կաթողիկոս մեծաւորները՝

իրենց հետևորդներով, ինչպէս նաև Ս. Կոսթի նշյման Գերման վանքի տեսուչը՝ իր հետևորդ վարդապետներով:

✱ 22 Յուն. Կիր. — Ս. Պատրիարքը տեղի ունեցաւ Մայր Տաճարին մէջ, ուր Ս. Պատրիարք Հայրը քարոզեց Աստուածայայտնութեան խորհուրդին վրայ, բացատրելով հոգևոր վերածնունդին հրօնաբարոյական իմաստը:

— Նախկին Հապէշ Նախարար մը, որ երուսաղէմ կը բնակի, տօնական շնորհաւորութեան առթիւ այցելեց Ս. Պատրիարքին:

✱ 24 Յուն. Գշ. — Ս. Պատրիարքը, Տ. Մենուշ Սրբազանի և Տ. Շառաշ Վրդ.ի հետ այցելեց Երուսաղէմի Կառավարիչ Վանք. Քիթ-Ռոյի:

✱ 26 Յուն. Եշ. — Ուրբո՛ւր, Վերափառ»ի արարողութիւն կատարուեցաւ ի Ս. Յարութիւն հանդիսապետութեամբ Տ. Մենուշ Սրբապո. Ի որ և պատարագեց հանդիսիւ Քրիստոսի Ս. Գերեշմանի վրայ և քարոզեց:

Վերագործին՝ վանքի ուսող գունէն Միսրա՛նութիւնը թափօրով և Վէյո ի լուսոյի երգեցմամբ բարձրացաւ պատրիարքարան, ուր կատարուեցաւ Ս. Աթոռոյ տառնական Տնօրնէքը: Այս արարողութեան պատահաբար ներկայ զու-

նուեցաւ Երուսաղէմի գերման դադուքին Պար երէցը, իր օգնականին հետ, որ շերտօրէն գնահատեց մեր եկեղեցական երաժշտութիւնը:

✱ 28 Յուն. Եր. — Ուսումն. Խորհուրդը այս առտու յատուկ նիստ ըրաւ. Սրբոյ Թարգմանչաց — Դուրեան Գրական Մրցանակի Ձորբօր Շրջանի բացման գործով: Այս նիստին մէջ փոփոխութեան Տ. Մկրտիչ Ս. Արքեպիսկոպոս Աղաւեստիի քահանայական յիշատակն յորեւանը տօնել, և այս մասին առաջարկ տանել Տնօրէն փոփոխութեան:

✱ 29 Յուն. Կիր. — Մայր Տաճարին մէջ քարոզեց Ս. Պատրիարք Հայրը, Յովնանէս Մկրտչի և Յիսուսի իմաստութեամբ և շնորհով ի մանկութեան մէջ մասնանշելով զքրիստոնէական մանկութեան շնորհաց դադունիքը:

✱ 30 Յուն. Բշ. — Լատինաց Ս. Պատրիարքին պատահած արկածը ցաւով իմանալով Սրբազան Պատրիարքը, ցաւակցական և բարեմաղութանքի նամակ մը ուղղեց Ն. Ամենապատուութեան՝ իտալական Լիւանդանքը:

✱ 31 Յուն. Գշ. — Տնօրէն փոփոխութեան առաջարկութեան Ուսումնական Խորհուրդի, այսօր իր հանձնարարութեամբ առաւ այս ապրիլ տօնելու համար Գեր. Տ. Մկրտիչ Աղաւեստի Սրբազանի քահանայութեան յիշատակն յորեւանը:

ԱԹՈՒ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ՅԱԿՈԲԱՆՆՑ

ԵՐՈՒՄԱՆԷՄ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Համաձայն կարգադրութեանց, որոնք մանրամասնուած են Ս. Աթոռոյ Սի՛ո՛ն Պաւսօնաբերի ներկայ 1939 թուոյ Փետրուարի այս քիւին իր Յուրեղած հրահարակուած Կանոնադրութեան մէջ, պաշիւ ունիմք բացուած յայտարարելու «Սրբոյ Թարգմանչաց — Դուրեան Գրական Մրցանակ» ի Ձորբօր Ներկայեցի Տարեօրհանը:

Մասնակցիլ փափաքողները կը հրաւիրուին ամենէն ուրբ՝ մինչեւ յառաջիկայ 1940 թուոյ Ապրիլ ամսոյ վերջը, իրենց գործերը նամակաւ յղել Ս. Աթոռոյ Ամենապաշի Սրբազան Պաշիարք Հօր, մեկնագրեալները՝ երկուական, իսկ ձեռագիրները մէկ մէկ օրինակ:

Այս Ձորբօր Ներկայեցի Շրջանի համար, ըստ է. յօդուածի նոյն Կանոնադրութեան, մասնակցողներն ազատ բոլորուած են իրենց ըմբելու իրենց նիւթը. բաւական է որ Ս. յօդուածի մէջ նշանակուած ընդհանուր գիծերու եղանակին մէջ լինի այն: Պէտք կը զգանք աւելցնելու միայն թէ նախապատուութիւն պիտի տրուի նախնեաց մատենադրութեան վերաբերեալ եւ բանասիրական բնոյթ ունեցող ուսումնասիրութեանց:

Ի դիմաց Ուսումնական Խորհրդոյ Ս. Աթոռոյ

Ասենադպիր

Ասենապետ

ՆԵՂԻՇԷՆ ՎՐԴ.՝ ՏԷՐՏԷՐԵԱՆ ՄԿՐՏԻՉ ԱՐԲԵՊՍ. ԱՂԱՒԵՆՈՒՆԻ

1 Փետր. 1939, Երուսաղէմ